

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ հաւար  
Տարեկան 12 Յր  
Վեցամսեայ 6 »  
Արսասահմանի  
Վեցամսեայ 8 »  
հաւար տարեկան 15 »

Սահեկայի հաւար  
Տարեկան 3 Յր.  
Վեցամսեայ 1.50 »

Մանուգումն տղը առաջին երեսին հաւար 40 ւ. իսկ վերջին երեսի հաւար 20 սանրիս է. երեքինն ունի սեպուսեհրու հաւար 20 ՍՍ գեղը կըլլայ :

Վառնայի հաւար ձեռք 10 սանրիս

# ՉԱՐԹԻՄ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նախկ եւ որով որկեղ  
Խորագրութեան հաս-  
ցիկն :

Редакция на востанке  
«Паржумъ»  
Варна

Redaction du journal  
«Charjoun»  
Varna (Bulgarie)

Արսասահմանի հաւար  
ձեռք  
( 20 ՍԱՆՐԻՄ )  
Պուշկարիոյ հաւար  
ձեռք

~ 15 ՍԱՆՐԻՄ ~

Գրութիւնք եւ չեմ տրուի

### «ՇԱՐԹՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԿԻՆ ՎՃԱՐԷ

#### ՄԵՐ Բ ԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Երկու անգամ Ռուսաստանի անպարտաճանաչ բաժանորդներու անունը հրատարակելէն յետոյ այսօրուան թերթին հետ մեր բաժանորդներուն կը զրկենք ապագրած նամակներ, որպէսզի փութան իրենց պարտքերը վճարել : Զը վճարողներուն անունները շարունակաբար պիտի հրատարակենք : Յուսով ենք որ մեր բաժանորդներուն մեծագոյն մասը արժանապատուութեան զգացմունքէ գրգեալ զմեզ պիտի ազատէ այդ անհաճոյ գործէն :

Խմբագրութիւն

#### ԶԸ ՅԱՓՇՏԱԿԻՆԵՐ

Իւրաքանչիւր հայ—լինի յեղափոխական թէ խաղաղական—ուրախութեամբ կողմնէ իրենց իրենց գործերը, նոր որոշումները :

Երբ Սրմէնիան իր արկունքները ի վեր դա առաջին նշանաւոր փորձն է կենտրոնացնելու ցիր-ցան ուժերը եւ ստեղծելու ի նպատակ հանրի միջազգային ամբողջական մի շարքով : Որքան կաջողի այդ ցոյց կը տայ ապագան : Եւրոպայի գրեթէ կոչած անձնաւորութիւնները իրենց մասերը եւ բարոյական հեղինակութեամբ եւ միանգամայն հայասիրական զգացումներով այժմից երաշխաւորում են, որ գործը աջող կերթայ : Հարկ կայ արդեօք պնդելու, որ այդ գործը դեռ «բոլոր» գործը չէ... Եւս հետո չեթանք մեր յափշտակութեան մէջ, չօրօրենք պատրանքներով եւ մեր միամտութեան կրկին չը գոհենք : Մի կուտք ունէինք 20 տարի առաջ—պաշտօնական Եւրոպայ, որ հռչակած էր եւ իրօք եղել էր ազատարար տաճկահայաստակ ստրուկ ազգերի : Մենք նրան գուրգուրացինք, երկրպագեցինք. բայց նա մեզ դաւաճանեց եւ կոխկռտելով ամեն սրբութիւն, հասկացրեց մեզ, որ զէնքն է միակ գերագոյն իրաւարարը եւ որ ազգերը պիտի կոնս իրենց սեփական ճակատագիրը :

Այժմ մի երկրորդ կուտք ստեղծելու վրայ ենք... Կուի եւ արեան զաշտեց գուրգուրանող մեր հասարակութիւնը այժմ, կարծէք, արաւազիք է հաւատալ, որ միջազգային

հայասեր շարժումը մի պահ առ է է, մի «համադարձան» հայի վերջերին :

Մի նոր պաշտամունք... Մի երկրորդ կուտք, որ անհունապէս աւելի մաքուր է քան առաջինը : Բայց որը դարձեալ վտանգաւոր է : Մեր յաւիտենական լուկաները, մեր անկեղծ ու կեղծաւոր խաղաղականները ստրկամտութեամբ գլուխ կը ծռեն այդ կուտքի առաջ եւ այսուհետեւ գուցէ աւելի յանդուգն ու ամբարտաւան կը գոչեն յեղափոխականներին : «Ձէնքը» ցամ դէք. մենք հանգիստ մնանք, հայասերները կը հոգան, Բրիւսէլի Յանձնաժողովը ամեն ինչ կը կարգադրէ»...

Ձգուչանա՞նք, եթէ չենք ուզում վերստին մատուել ճակատագրի դաժան իսպառնիքն :

Հայասեր շարժումը մեծ, սփոփիչ երեւոյթ է մեր իրականութեան մէջ—այդ մենք քանիցս շեշտել ենք արդէն : Եւրոպական պրոպագանդը անպայման անհրաժեշտ է թէ նոր աղէտները առաջն առնելու համար եւ եւ թէ մեր դատը կենդանի պահելու դիւանադիտական սեղանի վրայ : Բայց սուսկ այդ պրոպագանդը անգործ է ստեղծելու դիւանադիտում մեր ինքնորի արմատական լուծման տեսակէտից նպատաւոր տրամադրութիւն :

Սուլթանի վրա ազդելու համար—ինչպէս իրաւացի նկատեց կօնգրէսի անդամները միմեզ—պէտք է ուժ գործ դնել : Կօնգրէսի որոշումները, տարաբարտաբար, չեն համապատասխանում այդ հրամայական պահանջին : Հայասեր շարժումը իր արդի կերպարանքով—յուսանք, որ ետեղհետէ նա կը կերպարանափոխուի—անկարող է հրաւիրել ազգու միջամտութիւն :

Եւրոպացի մեր բարեկամները զրկելու Մուշ հեւպատոսական գործակալներ, եւ նրանց յորդորներով նորերը եւս կը զրկեն հայրենիքի գանազան կողմերը : Մեծ վատտակ է դաներկայ պայմաններում եւ վերին աստիճանի կազդուրիչ հանգամանք :

Սակայն մեր պարտքն է յիշեցնել նաեւ, որ այդ գործակալները չկարողացան օգնել, երբ 1885ին արեան հեղեղները ոռոգում էին Մեծ Հայաստանը : մեր պարտքն է յիշեցնել, որ Եւրոպայի լիազօր ներկայացուցիչներն անգամ մազի շափ չօգնեցին, երբ իրենց աչքերի առջև հազարաւոր հայերի դիակներ փուռու էին Կ. Պօլսի սալայատակների վրայ :

Պատրաստ լինենք միշտ հաւաւր պատահականութիւնները համար. մի քիչ նազ լաւտեստ, մի քիչ աւելի ուշալիստ ու գործնական լինենք :

Խորախոսենք եւրոպական պրոպագանդը, բայց աւելի եւս խորախոսենք բուն գործի պրոպագանդը հայրենիքում, առանց որի չիք հայկական դատ :

«ԳՐՈՇԱԿ»

Այս առաջնորդողը մենք արտատու պում ենք որովհետեւ նրանում որոշ կերպով յայտնվում է Դաշնակցութեան կարծիքը Եւրոպայում պրոպագանդ անելու մասին եւ փարատում է այն ենթագրութիւնը : Թէ դաշակցութեան օրգանը կարող է գերակշռող նշանակութիւն տալ եւրոպացիներին մէջ պրոպագանդա անելու գործին :

Ի. Եւրոպայի

#### ՄԵՆԻՍԵՆԵԿ ԵՒ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՀԱՅ ՄՍՏԵՆԻՉՆԵՐԸ

Վերջին 15 օրուան ժամանակամիջոցին մէջ Իզմիրցի հայը բարեբաղդութիւնը կուենայ երկու դաւաճան հայեր հողին յանձնելու : Մէկը փոխա Մաքսուտը իսկ միւսը Գարեգինը, շնորհունակ տէր Արքայաճամ Մանիկեանի որդին : Մաքսուտի սպանութեան պարագաները արդէն «ճարժում»ի ընթերցողներուն ծանօթ է, որ յունական հիւանդանոցին մէջ երեք շաբաթ հոգեվարքի դառն ճգնաժամեր անցնելէ յետոյ և իր բուր մեղքերը ու ՄԵՂՍԱԿԻՑՆԵՐԸ խոստովանելէ վերջ կերթայ Մուհամմէտի գողը ի շարս շէյխտներուն :

Երկրորդը, Գարեգին տէր Արքայաճամեանը, այդ սրիկայ «Կայս» թէն» վատը յուլիս 24ին շորեք շաբթի օրը առաւօտեան ժամը 9 1/2 ին (Ը. Ե.) իր աշխատած վաճառատան մէջ օգցերեկով 25 պաշտօնեաներու և յաճախորդներու ներկայութեամբ, երկու տէնօրիտներու գնդակներու տարափին կենթարկուի : Այն պարագային ուր գնդակներու ձայնը ելաւ յոյն այդ փողոցէն կանցնէի. աճապարեցի հոն ինչպէս ինձ հետ ամբոխը. և տեսա-

րօնը, իր տեսակին մէջ եղական, պարզուեցաւ առջեւս. վեցհարուածեանը պարպող երիտասարդը պաղ արիւնով և հատիկ հատիկ կը քաշէր բըլթակը, կարծես թէ օգին մէջ փորձ մ'էր որ կը կատարէ այդ վայրկեանին. յանկարծ գոռում գոչումով մէկ անկիւնէն միւսը կը փախչէր խելագարի նման վատը և այդ գնդակներու տարափին մէջ շունչը պահականոց կաննէ և հայերը զիս զարկին ըսելը և նուազած գետին ինչալը մէկ կըլլայ : Սպանիչները ազատ են : Վերաւորը կը փոխարեն հիւանդանոց (յունական) իր փափաքին համաձայն, մինչեւ երեկոյ յունական հիւանդանոց կը մնայ և անտի կը փոխարեն հայոց հիւանդանոցը վերաւորին հօրը կամքին համաձայն :

Ազգային հիւանդանոց փոխարուելէն 7 ժամ վերջ իր շունչը կը փչէ ի սեծ ուրախութիւն հայ համայնքին :

Եղելութիւնը համառօտակի նկարագրելէ վերջ անցնինք բուն պատճառին :

Այն պարագային ուր Դաշնակցութիւնը պաշտօնական նամակներով հայ հարուստէն դրամ կը պահանջէ ի նպատակ Հայրենիքին, ի հարկէ մաս մը դրամ ալ Մուքսուտեան եպիսկոպոսէն պահանջելու իրաւունք կուենան. իրաւունք մը որին արդարացի ըլլալը ինքնին անվիճելի է. Իզմիրի առաջնորդը այս փոքրիկ զօհողութեան չը հանդուրժեք. զօհողութիւն մը որ մի քանի խաչճամբոյր գումարէ մը անդին չանցնիր :

Այդ կողմն վրայ Մուքսուտեան եպ. և իր արբանեակները իրար կանցնին, կառավարութեան լուր կուտան : Խոստովանենք և խուզարկութիւններ կշարունակուին, բանտերը կը լեցուին պանդուխտ հայերով : Առաջնորդարանի մէջ ծածկապէս երկու լրտեսներ կը պահեն «Մաքսուտ և Գարեգինը» որպէսզի յեղափոխական ներկայացուցիչը երբ երկրորդ անգամ առաջնորդարան ներկայանայ,

լրտեսին և այդ մարդուն ո՛վ ըլլալը կամ ուր բնակելը ծանօթանալով ձերբակալել տան : Եւ իրաւ այդ երկու հերոսները... մասամբ հասան իրենց նպատակին ձերբակալել տալով ենթական, որ բաւական ժամանակ բանտ մնալէ վերջ Ամերիկեան հիւպատոսին միջնորդութեամբ ազատուցաւ և այժմ կը գտնուի արտասահման : Այդ օրէն ի վեր Մաքսուտ և Գարեգին եղան յայտնի լրտեսներ, մէկը Մէլքիսեղէկի թելադրութեամբ իսկ մէկը Պալիօզեանի :

Անոնք որ մօտէն կը ճանչնային Գարեգինը, կը խրատէին որպէսզի հեռու մնայ այսպիսի անպատուարեր գործէ մը և միեւնոյն ժամանակ կեանքը վտանգի մէջ չի նետելը կը զգացնէին :

Հակառակ այս բոլոր խրատներուն, հակառակ պաշտօնական յայտարարութիւններուն, Գարեգին անգրգուելի մնաց : Եւ միեւնոյն ժամանակ զի՛տէք ի՞նչ կը պատասխանէ, ես զինուած եմ. ես իմ կոնակս Պալիօզեանը ունիմ... իմ մէջքս զայնչ կայ սպիտիկ : իմ պայտպան կառավարութիւնն է և ես անխոցելի եմ. խեղճ տղայ :

Եւ այն հերոսը որ Գարեգինի վրայ գնդակները կարձակէր, կը սէ-Գարեգին ո՞ր է զայնչդ... :

Մէլքիսեղէկ եպ. Մուրատեան, այս փառասէր և յաւակնոտ մարդը ամենէն ստորին դերը յանձն կառնէ իր փառասիրութեան յագուրդ տալու համար : կղերի գիմակին տակ հրէջ մ'է. գաւաճան մը. օրիկայ մը, գծուծ և փառամոլ մը, վախկոտ վատ մը և թուլամորթ մը բառին լայն և ընդարձակ առումով... : Ըստ Մէլքիսեղէկի ինքն է ամենէն զարգացեալ կղերականը. ինքն է կաթողիկոսութեան կամ պատրիարքութեան ամենէն արժանաւոր վեղարարը, իրմէ դուրս և է կղերականի արժանիքը խոստովանելու ազնուութիւնը եր-

բէք ունեցած չէ : զմիրցի հայը այս ամենը գիտէ և դարձեալ արհամարոյ լուծիւն մ'է որ կը պահէ այս ճիւղ վեղարարին հանդէպ, որ իր առաջնորդութեան օրով իզմիրցի հայուն բարոյական եսը իրեն շրջապատող օտար ցեղերուն քով վարկարեկ ընկէն անգին շանցնիր :

Ըսէք կաղաչում իզմիրցի իմ հայրենակիցներս, ինչո՞ւ բերիք այս մարդը, ի՞նչ կ'ազնակալէիք այս վեղարարէն որ իր նախորդ 10 տարու առաջնորդութեան շրջանին մէջ իր բոլոր համբաւաւոր գործերուն ակնատես եղաք : Մոռցա՞ք այն մատուցած ծառայութիւնը որը շնորհիւ «Արշալոյս» խմբագիրը կը բանտարկուէր և «Արշալոյս» լրագիրը յաւիտենական գաղարման կը գատապարտուէր, յոռացա՞ք այն գերեզմանական խնդիրը ուր կը ջանար ամբողջ ազգի մը բնգունած սկզբունքը իբրեւ «խալ կամ սուտ հոշակել» : հոս ո՞ր մէկը թուեմ :

Առաջին շրջանին այս կարգ մը իրողութիւնները պատկերացնելէ վերջ անցնինք նոր շրջանին :

Թերեւս հարցնեն «մանք թէ իզմիր գալէն ի վեր ի՞նչ կ'ընէ այս փառասէր ճիւղը» :

Իր եկած օրէն ի վեր «շուրջ 4 տարի» ուր որ էին դպրոցական, և ազգ. կառուածական կարգ մը խնդիրներ դարձեալ մազի չափ բարեկարգուած չեն : դըպրոցը տարուէ տարի անկուծի է որ կը դիմէ, ազգ. պարտքը տարուէ տարի կը բարդուի իր վարչական գործերու անձեռն հասութեանը շնորհիւ, և եթէ կառավարութեան հետ գործերու բերումով պաշտօնական գիմուծի հարկ ըլլայ, գիտէք ի՞նչ կը պատասխանէ : «Իմ գործս չէ այդ. ես անկարող եմ այդ գործին միջամտելու» : Հոս կարգ մը օրինակները, յիշենք : 1899ին 10 հոգիի չափ Մշեցիներ կանոնաւոր

անցագիր առած Մուշէն իզմիր կուգան որպէսզի իրենց եղբայրներուն կամ ազգականներուն տեղ փոխարինեն, հինքը հայրենիք շրջելու համար : խեղճերը հազիւ ոտքերնին ցամաք կը դնեն ուղղակի բանա կառաջնորդին. մի քանի օր բանա մնալէն վերջ դարձեալ այդ ճամբորդները իրենց տեղերը վերադարձուցին : Այդ ժամանակ շատեր գիմուծը իրեն առաջնորդին որ կառավարութեան քով միջառէ : այն իմ գործս չէ ըսելով կը մերժէ. նոյն իսկ այդ ժամանակ կառավարութիւնը առաջնորդին քով մարդ կը զրկէ թէ՛ եթէ ինքը երաշխաւոր կըլլայ այն մարդոց ազատ կը ձգենք. բայց Մէլքիսեղէկ կը մերժէ «ես չեմ խառնուիր ինչ կուզէք այն ըրէք» : Գարեգին օր մը Ռուսիայէն հայ մը իզմիր կուգայ իր ընտանիքին քով և մարդը կանոնաւոր անցագիր ունէր, պահակատունէն վար կը դնեն և երաշխաւոր կը պահանջեն դարձեալ առաջնորդէն, որ կը մերժէ և մարդը գիշեր մը բանտ կը մնայ : հետեւեալ օրը թաղեցիք երաշխաւոր կըլլան և մարդը բանտէն կը հանեն :

Իսկ աւելի և աչքի զարնող փառութիւն մը գոր Մաքսուտը իր մեռած օրը խոստովանած է ուրիշ թղթակցութիւնով մը պիտի գրեմ, աճապարանօք առ այժ այնչափը հազիւ կրցի փոստին հասցնել :

Մէլքիսեղէկ և իր արքանեակները թող չը կարծեն թէ իրենց այս բոլոր արարքները մենք չենք գիտեր. մենք տեղեակ ենք այն ամեն ինչին որ կը դարձնեն մէլքիսեղէկեան խումբը և ի միջի այլոց Տէր Ղեւոնդ Մաղիկեանը, ամեն բան իր ժամանակը ունի :

Միր-Կարո

Իզմիր



ԲԱՆՍՍՈՒՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա. 17  
ԳԼՈՒԽ 2.

Մաղիկեանի ներս մտնելուն պէս փանդարմի կապիտանը ճիզօրիթական ժպիտը երեսին ոտքի կանգնեց և ասեց :

— Երեցէք պարոն Մաղիկեան, առանց ձեզ հարցնելու տեղաւորվել ենք ձեր սենեակում, բայց ի՞նչ արած մեր պաշտօնն ենք կատարում :

— Այո պարոն, ես էլ գիտեմ որ դուք ձեր պաշտօնն էք կատարում. թէ չէ ուրիշ հանգամանքներում դուք ոչ մի գործ չէիք ունենալ իմ տան մէջ : Ուրիմն հրամայեցէք կատարեցէք :

ժտէք ձեր դերի մէջ, ձեր ներկայութիւնը արդարացնելու համար :

Կապիտանի ժպիտը օտոնց. նա խոթող կերպարանք ընդունեց, լաւ ըմբռնելով Մաղիկեանի խօսքերի մէջ ոչ այնքան թագնոված արհամարաբքը :

— Յանձնեցէք մեզ ձեր բոլոր թղթերը, շարունակեց կապիտանը :

— Համեցէք պարոն. իմ արկղներին բունալիները. փնտռեցէք ամեն կողմ, Համոզված եղէք որ ձեզ հետաքրքրող ոչ մի բան չէք գտնի :

— Օհ, դուք հին թուղթն էք, գիտեմ. մեզ հետաքրքրող թղթերը ձեր բնակարանում չէք պահի. բայց եւ այնպէս մենք կը փնտռենք... :

Այդ ասելով կապիտանը առաւ բանալիները և սկսեց արկղները բանալ. երկու ժանդարմները սկսեցին քննել, խուզարկել, հաւաքեցին բոլոր թղթերը, տակնուվրայ արին անկողիները, ճերմակեղէնները... ամեն

մի կտոր ուշի ուշով քննեցին և ոչ մի բան չը գտան :

Թղթերը մի կապոց չինեցին. նամակներ առհասարակ շատ քիչ կային : Այդ չը վրիպեց կապիտանի ուշադրութիւնից և նա կրկին օձի ժպիտը երեսին ասեց :

— Պարոն Մաղիկեան, ձեր թղթերի մէջ գրեթէ նամակներ չը կան. ինչպէս երեւում է դուք նամակ պահելու հետ շատ թշնամի էք :

— Այո պարոն, որովհետեւ երբէք ինձ հաճելի չէ որ իմ ինտիմ կեանքս ուրիշները գիտնան. տեսէք, հիմա եթէ նրանք գոյութիւն ունենային, դուք պէտք է գիտնայիք թէ ես ծնողներին ինչ եմ գրում. նրանք ինձ ինչ են գրում. իսկ դրանք կարծեմ ձեզ համար այնքան էլ հետաքրքիր չեն :

— Բայց ի՞նչից գիտնանք որ դուք մեզ համար հետաքրքիր մարդկանց

«Վերջին ճամբորդութիւնս անակ երեւոյթներ ներկայեց ինձի. որ չը պիտի կրնայի բոլորովին անտարբեր աչքով դիտող մը ըլլալ այդ ամենուն : Անանկ զեղծումներ, որոնց Պատրիարքարանը և Օրագրութիւնը ակամբ չէին կախած բնաւ, անանկ ընտրական հրէշութիւններ, որոնք օրինական և ոչ մէկ կերպով արգարանալով հանդերձ վաւրացում գտած են ու պաշտպանուած քանի մը օրագրողներէ, անանկ այլանդակութիւններ որոնք ծաղիկեայ փխրոնով մը պատկուած են, ինծի համար այլ եւս ուրագրական լուրեր» ըլլալէ պաղքեցան :

«Հանդիպեցանք, օրինակի համար, անանկներու, որոնք գաւառին անկիւնը իրենց տեղապահութեան օրով զոյգ լանջախաչերով շրջած ու պատարագած են, առանց կաթողիկոսական պատուութեան, անանկներու, որոնք Պատրիարքարանէն նպատակաւ զրկուած գրամները կերած են, անանկներու, որոնք քահանաներու թաւշեայ մանիշակազոյն փակել շնորհած են, անանկներու, որոնք հեռուէ հեռու վանք մը նորոգած ըլլալու սուտ տարածայնութիւններով ինքզինքնի գրուատել տուած են, անանկներու, որոնք ամուսնալուծութիւն պահանջող դժբաղդ կի՛նելու վրայ դժխական» գործնական փորձեր կատարել տուած են առաջնորդարաններու մէջ :

Սա պայմանները, սակայն կրնան զեղծանել ոչ միայն անդակաւ ժողովուրդները, այլ նոյն իսկ Առաջնորդները, քանի որ երկու դժգոհներու համար, ոչ կանոնաւոր քննութիւն տեղ կուենեայ, ո՛չ ուղիղ համարատուութիւն գործերու և ո՛չ ալ անաչառ դիտութիւն մը կայ իրենց գործառնութիւններուն վրայ :

Մուշեղ Վարդապետ «Մանգ. էփֆ.»

հետ չէք թղթակցում :

— Նրանից որ նամակներ չէին պարոն Մաղիկեան, դուք կրկին տաքըքրվում էք հայկական խնդրեր :

— Այո, պարոն, ինչպէս կապիտանը ասում է :

— Արտասահմանում հրատարակող հայ յեղափոխական թերթեր ստանում էք :

— Ոչ, բայց եթէ ձեռքս ընկնի կարդամ :

— Ուրիմն դուք չէք ստանում բայց ուրիշների ստացածը կարդում էք :

— Ոչ, պարոն, ես ասում եմ եթէ ձեռքս ընկնի կը կարդամ : Արդէն նշանակում է որ այդ թերթից ձեռքս չի ընկնում :

— Այնուամենայնիւ ես այսօր պէտք է ձերբակալեմ. ինչպէս թղթերը քննվել, դուք բանտարկեմ :

ԲԱՑ ՆԱՍԱԿ

«ԻՐԱԻՈՒՆԲՈՒ ԽՄԲԱԳԻՐ ԳՈՒՐՊԵԹ ԻՖԵՆՏԻՆ»

Ժամանակէ մը ի վեր ինքզինքդ մեզի մաքուր մէկը ցոյց տալ ու զելով կեննս աներեսաբար, հայ յեղափոխականները աւազակ, դող սրիկայ և այլն մակդիրներով կորակես, որոնց ամենէն անշան անդամին ոտքին հողը անգամ չես արժեր, ըլլայ Հնչակեան ըլլայ Դաշնակցական:

Սնուածիկ փաստերս, Դուն չե՞ս Պուլթանէն կաշառուելու համար մասնիչի մը ընկերակցութեամբ «Հուգուգ» հրատարակողը:

Դուն չե՞ս «Հուգուգ» երկրորդ թիւը երեւնալուն, տածիկ հիւպատոս Բէֆիկ պէյէն հրաւիրուելով անոր առաջարկած 20 ոսկին մերժողը:

Դուն չե՞ս հիւպատոսարանէն դուրս ելնելով շիտակ ընկերոջդ գալով հետեւեալ խօսքերը ընկերոջդ դուրսը. «այսօր Բէֆիկ պէյը զիս կանչես և ուզես 20 ոսկի փոխարէն «Հուգուգ» գաղտնի տալ. բայց ես ինքզինքս անկաշառ մէկը ցոյց տալով դերատանական ձեւեր առի, որովհետեւ անպատճառ Սուլթանէն խոշոր դուրսը մը պիտի գայ շորորդ թիւը երեւնալուն պէս:

Ապուլը ինչպէս 20 ոսկիով կուզէ զիս գոհացնել. քանի որ երեք թիւին աւելի ծախք ըրած եմ, Դուն չե՞ս, Օտէսա արտորուելով, այնտեղ Մանկիկեան և Մատուրեան վաճառականներէն իբրև հայ յեղափոխական արտորուելով մէկէն 30 ռուպլի և միւսէն չեմ գիտեր որչափ շորթողը:

Դուն չես անոր տունէն դուրս ելնելով Օսմանլիի խմբագրութեաւ նամակ մը գրողը, և ինքզինքդ Մուհամմէտէն աւելի Մահմետական մը ցոյց տալով:

Ված պէտք է մնաք: —Ես ձեզ հաւատացնում եմ որ իմ թղթերի մէջ ոչ մի քան չը կայ որ կարողանայ իմ ձերբակալման պատճառ իննել: Դուք ինձ ձերբակալելով, մի քանի օր պէտք է զպրօցը անկարգ վիճակի ենթարկէք. ինքներդ էլ տեսնում էք որ բան չը կայ. իսկ եթէ ձերբակալու ուրիշ լուրջ պատճառներ ունէք, այդ ուրիշ խնդիր:

Մենք միայն կովկասից հրաման ունենք ձեզ իբրև կասկածելի մարդի խուզարկելու. բայց ձեր մօտը ոչ ինչ չը գտնելու ինձ աւելի է անհանգստացնում: Ես յուսով եմ որ կովկասում ձերբակալված ձեր ընկերներին մօտ ձեզնից մի բան կը գտնվի:

Բայց պարոն, այդ յոյսը բաւական չէ ինձ ազատութիւնից զրկելու. ես այստեղից չեմ փախչելու:

Ինչ թական վարձատրութիւն մը մուրացող և ստացողը:

Դուն չե՞ս 98 թուականին Աթէնքի «Միութեան» թերթի թափառիկի յօդուածներէն քաղուածք մը ընելով Արփիարին դաւաճան ըսողը, և հիմակ ալ պաշտպանողը, նորէն շահուգ համար:

Դուն չե՞ս Պապը Ալիի երկրորդ ցոյցը հազարն սվսաննաներով փառաբանողը, դաշնակցականներուն աչքին աղկի երեւնալու համար, որովհետեւ շահոյսին պէտք կը պահանջէր:

Դուն չե՞ս Շահրիմանի և Սարգիսեանի մատնութեան խնդրին մէջ Շահրիմանը արդարացնելու ճիգեր թափողը, և ինքզինքդ 4 միլիոն հայ ժողովուրդին կողմանէ գատաւար կարգելով 3 հարցումներ ուղղողը անոր հասցէին, որ շատ ծիծաղելի եղար մեզի:

Եւ ասոնք ըրիր անհատի մը կողմանէ քեզի տրուած սուս բայլի մը համար:

Ես և ինձի պէս շատ մը համոզում գոյացնողներ կան, որ դուն շահու համար աշխարհէ ամենէն ստորին միջոցներու կը դիմես: Սուլթանէն կաշառուելու համար «Հուգուգ» հրատարակեցիր, բայց ունեւիով պոչէք բոնեցին դուրսն հետեցին քեզ Պուլկարիայէն. հիմակ նոր ծրագիր մը ընտրած ես. այդ նպատակիդ հասնելու համար, հայ յեղափոխականները մեզի գող, աւազակ, սրիկայ և այլն ցոյց տալ ուզելով, բայց քեզի հիւլէի չափ կարեւորութիւն տուող չիկայ. միայն գրածներդ կարգալով կը խնդանք վրադ:

Թարուորին իրաջիկեան

Իպրայի 2 օգոստոս 1902

Տէ՛ր Խմբագիր

(\*) Ի պատասխանի պ. Մանուկ Սէթեանի «Մ. Գոռայր» առ ինձ ուղղեալ թերթիդ միջոցաւ:

Արդ արդ սրբու չէր արժէր որ այդ պարոնի գրին պատասխանել. (քանի որ շիտակը ուրացեր է յայտնելու) թող պ. Մ. Սէթեանը ճշգրտութիւնը գրէր որ ես ալ այն անցեալ յենչէրիական ինձ տուած նամակը երեւան չը հանէի:

Ահաւասիկ ճշմարտութիւնը թէ ինչպէս եկեր է ասդ Պրայիլա պ. Մ. Սէթեանը:

Նախօրոք Ռուսուքէն տիար Գառնիկ Տէօքմէճեանէ նամակ մը ստացայ, որով մեզի առաջարկած էր ուսուցիչ ձայնաւոր մը, բայց այն կամեցած անձի ո՞վ և ի՞նչ անուն և կամ ինչ բարքի ու վարքի տէր և կամ ո՞ւր ուսում առած, յայնժամ Տ. Գ. Տէօքմէճեանի հարցուցի վերագրեալները. նա ալ բնաւ պատասխան մեզի չը տուաւ, յետ այնորիկ երեք շաբաթներէ վերջ այդ պ. Մ. Սէթեանը կելլայ առանց հրատարակելու կուգայ ասդ շաբաթ օր մը երեկոյեան ուղղակի մեր Սուրբ եկեղեցոյ տընակը զորս մենք կը բնակիրք, մենք առանց ճանչնալու հրամցուցինք տունէն երս, այնուիկ սկսանք զիրարու հարձանել. երբ իմացանք որ այս պարոնը Սիլիստրէյի վարժապետութեան խայտառակութեամբ ճամբու գրուածն է եղիր:

Յետեւաբար անդակացանք որ ինքը պարսպ նըստելէ յետոյ լոկ յուսով առանց հրաւիրագրիս կելլայ կուգայ տեղըս, սուրճեր:

(\*) Այս նամակը կը տպագրենք բոլորովին անփոփոխ կերպով, որովհետեւ ինքը տէր հայրը կուգայ անձամբ հաստատել որ անուս և տգէտ է. ինչ որ ըսած էր պ. Գոռայր, թէ եւ բարի մարդ:

Իմ.

Ված պէտք է մնաք: —Այո պարոն, թուղթը ուղարկել են որ հանգանակեմ. բայց բաւական ուշացաւ. որովհետեւ այս թղթից այս փոքրիկ քաղաքում մի քանի հաս զրկված է: Որին դիմում ես պատասխանում է թէ այս ինչի մօտ ստորագրվել եմ. ամեն վարդութիւն իր պաշտօնեաներին ուղարկել է: Տեսէք, եթէ ինձ ձերբակալէք, այս էլ պէտք է կիսատ մնայ, ծիծաղելով վերջացրեց Մաղիկեանը:

—Ձերբակալելու համար բաւական փաստեր չունիմ. թէ չէ այդ էլ ձեզ չէր ազատի իմ ձեռքից:

Ինչ, առ այժմ ցրտեսութիւն: Յոյս ունեմ որ մեզ մօտ չենք տեսնուի:

—Ես էլ այդպէս եմ կարծում:

(Շարունակելի)

նիս հրամայէ յետոյ, մենք ալ իրէն այն գիշերուայ հանգստ ընելու հօգ ընելով ժամկոչիս ձեռք (Տ) ինք ֆրանք ալ տովինք ու զընաց գիշերուայ հանգստանանալու, միւս առաւօտեան (կիրակի գողով) եկաւ Սուրբ եկեղեցի, Սուրբ անմահ մեղաքաւիչ պատարագի վայելչաբար դպրութիւն ըրաւ, յետ արարման ժամասացութեանց, եկանք մերին արնաչը (չորս գիտես) ըստ մեր կարեաց տեսութիւններ ըրինք սիրովաբար, սակայն երբէք տեղըս վարժարան բանալու ո՞չ խոստումներ ընողներ և առաջարկող եղան և ո՞չ ալ ըլլալիք ունի յաւիտեանս յաւիտեանից, ո՞չ ալ ինձ ամսականէս մաս մը դպրոցի բանալու բաժին հանել և այլն, այդ ալ հիմնովին սուտեր է գրածները պ. Մ. Սէթեանի, ինչ հարկ երկարորէն ձանձրոյթի տալ ձեզի, եթէ մենակ իրէն ասդ հրաւիրագիր մը զրկած ունիմ Ռուսուքէ թող երեւան հանէ, զայսքանը կը բաւէ, եթէ ոչ իւր ստախոսութիւնը յոյսով յանդիման կերեւայ: Չայսքանը գրեցի ձերդ սիրելութեան իբր անկեղծ բարեկամ որ ըստ այնմ համարձակիս այդպիսի սուտ ու մուտ գրութիւնք պատուարժան «Մ.Ս.Գ.Ս.Մ.» թերթի մէջը անձունէս, եթէ այդպիսի լուրեր պիտի հրատարակէք յայնժամ կըսեմք նըման զնըմանն սիրէ:

Առանց այլոյ, մնամ անգին կենացնուող ողջագուրելով զձեզ:

Մնամ աղթարար

Գոյս

Սեփիան Գահանայ Կիլիմեան

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

—

ԱԶԳՍՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ստոյգ աղբիւրէ կիմանանք որ Հնչակեան նոր կեդրոնի կարեւոր և յարգուած անդամներէն մին առ այժմ ոչ պաշտօնական բունակցութիւններու մէջ է Դաշնակցութեան հետ-միութեան խնդիրը կարգադրելու համար:

Պոլսոյ «Սուրհանդակ» «Մանչուսթի Էֆ. քեար» և «Փունջ» թերթերը յանկարծակի դադարած են կառավարութեան հրամանով:

— Պատրիարքը կը պնդէ իր հրատարականին վրայ. եւրոպական թերթերը կը հազորքեն որ յեղափոխականներ պատրիարքին սպառնալով պատուիրեր են հրատարականի խնդիրը շուտով վերջացնէ և ասպարէզէն քաշուի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

«Պարանկֆուրթէր Յայթուկ» Պոլսոյ թղթակիցը օգոստոս 5 թուակրով կը գրէ մօտաւորապէս հետեւեալ խիստ յատկանշական տողերը:

«Ն ինչպե՞ս դեսպաններու յարատեւ գիմումներուն հանդէպ նախարարական գօմիթէ մը կը կազմուի Մակեդոնական բարենորոգումներու ներմուծմամբ զբաղելու, Սուլթանը դեռ մի քանի տարի առաջ գոյացող բարենորոգումներու!!! վերջ տուաւ: 95ին որոշուեցաւ վախճանուն հայ օգնականներ տալ, որոնք Սուլթանի քրիստ. հպատակներուն իրաւունքին վրայ պիտի հսկէին: Նոյն իսկ այն ատեն պարզ էր որ այս օրէնքը եւրոպ. դիւանագիտութեան և մամուլին աչքերուն թող փչել կը նշանակէր: Քրիստ. օգնականը միայն այն ատեն գործնական օգուտ կուեննար, եթէ միեւնոյն ժամանակ օտարկանութիւնը հիմնական բարեփոխման մը ենթարկուէր: Առանց ասոր օգնականներու աղքեցութիւնը զրօր հաւասար պէտք էր ըլլար: Բայ աստի Դուռը զանոնք լաւ տարրերէ չընտրեց, հապա իրեն ծանօթ և բացարձակ համակերպողներ, որոնք թիւրքէն աւելի թիւրքական հին և անբարոյականացումին ու տնտեսական քայքայումին մղում կուտային և քան զանոնք կը պայքարէին:

Այս նոր օգնականներու դաւաճանութիւնը թիւրք կառավարութեան սխալ էջերը կը կազմէ. որ այդ «բարենորոգումը» վերցուեցաւ, իրօք «բարենորոգման ուղին ըլլալ կը թուի»: Եւ նմանը տեղի պիտի ունենայ

Մակեդոնական բարենորոգումներուն նկատմամբ: Թուրքիան, որուն կեանքը բացարձակապէս եւրոպա պահելու կուզէ, բարենորոգութեան ապրանք չէ, եւրոպական տէրութեանց կը մնայ հսկել, որպէսզի Սուլթանի իրաւազուրկ քրիստոնեայ բնակիչները բոլորովին կամայականութեան ոչեն թարկուին...»

Ասոնք մինչ ցարդ լաւ «հսկեցին», Ըսելիք չկայ:

Հայտնաբերել Դաւառացի — Հանգուցեալ նախկին վեզիր Րիֆաթ փաշայի երկրորդ որդին ԱՏՄէտ Միտհատ պէյը իր սպաննուած եղբոր ձէւստ պէյին որդի Ալիին հետ արտօսահամա փախեր է:

— Բարձրագոյն Դրան կարեւոր պաշտօններէն Սալիֆ պէյ կարեւոր տօկլումաններ առնելով Հետը արտօսահամա փախեր է:

— Պարանկան զօրավար Սօսիէ Պոլիս գալով և թրքական զօրահանգէսը տեսնելով գովեր է թուրք զօրքերը:

— Սուլթանը չի ուզեր Սէրէսի խնդրին համար Պուլկարիոյ պահանջները կատարել, որովհետեւ պուլկար կառավարութիւնը արգելք չը հանդիսացաւ Մակեդոնական գօնկրէին:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Նահանգային վարչութեան անգամներու ընտրութիւնները տեղի ունեցան. Սոֆիայի մէջ և ուրիշ շատ մը տեղեր կառավարութեան կուսակիցները լաջողութեամբ ելան:

— Մակեդոնական յեղափոխական կուսակցութիւնը երկու մասի բաժնուեր է և ամեն մէկը իրեն համար առանձին Բարձր կօմիթէ ընտրեր է:

Բայց կըսուի թէ կրկին ճիգեր կը թափուին որ բաժանման առաջը առնուի:

— Կսուի թէ նախարարացի Պ. Տանէֆ Պեկրատ պիտի երթայ մակեդոնական խնդիրներու մասին որպէս կառավարութեան հետ համաձայնութեան մը յանգելու համար: որպէսզի այդ խնդրին պատճառով երկու երկիրներուն յարաբերութիւնները չը լարուին սպազային:

Թ Ո Ւ Ս Ի Ս

Գերմանական թերթ մը կը հազորքէ որ Ռուսիոյ ելեւմտից նախարարը Վիթէ այս օրերս մեկնած է Օտէսա, և այդ ճամբորդութեան նպատակը յայտնի չէ: Լրագիրներուն արգելուած է նախարարի ճամբորդութեան մասին բան մը գրել:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Կլեբրականներու դպրոցներուն գոցումը կը շարունակուի. քանի մը տեղ զինուորներու աջակցութեան պէտքը զգացուեր է. կառավարութիւնը համոզուեր է որ արքայականներն են գլխաւոր գրգռիչները, և քանի մը կարեւոր գրգռիչներու դէմ դատ պիտի բացուի:

Ա Ն Դ Լ Ի Ս Ե Ւ Յ Ո Ւ Ն Ա Ս Յ Ա Ն

Էջմարցիէն յայտարարած է որ կիպրոսը անկարելի է որ միացուի Մայր Յունաստանին: Էջմարցիէնի այդ յայտարարութիւնը մեծ յուզում առաջ բերեր է թէ Յունաստանի և թէ կիպրոսի յոյն բնակիչներու մէջ: Յունաստանի և կիպրոսի մէջ հակաանգլիական միթիւնգներ տեղի ունեցեր են:

Ք Օ Ր Է Ս

Ռուսական լրագիրները կը հազորքեն որ Քօրէյի մէջ օտարականներու խուժումին դէմ մեծ դժգոհութիւններ կան: Քանի մը ճարտագի վաճառականներ սպաննուած են և մէկ քանին ալ երկրէն արտաքսուած: Ճարտագի դեսպանը Քօրէյի կառավարութեան պահանջած է խուժութիւնները ճնշել և քիսաները հատուցանել:

Ա Ն Զ Ն Ա Ս Պ Պ Ա Ն Մ Ե Ռ Ե Ս Ա Ը

Պարանայի նշանաւոր վեպասաններէն Ռընէ տը Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ և բարոյալից վէպին

19<sup>ր</sup> և 20<sup>ր</sup> թերթերը հրատարակուեցան:

Գիրքը շարժել երկու թերթ կը հրատարակուի և իւրաքանչիւր թերթը կը ծախուի 5 սանթիմի: Աւրոզլ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ:

Վառնայի համար բաժնագին 1 Ֆր.: Ուրիշ քաղաքներու և արտասահմանի համար 1.20:

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ և արտասահմանի համար հինգ թերթ մէկ ծրարով կը զրկուին. փոսթի ծախքը հրատարակչին վրայ է: Դիմել հետեւեալ հասցէին՝ Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.

Դրամի փոխարէն նամակագրոյժ ալ կ'ընդունուի:

Յ Ս Յ Տ Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ՔԱՐԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Իրեցազնօրէն» ի նպատակ շայ Ուսանողական Միութեան:

Գինն է 1 լէֆ արծաթ: Կը ծախուի նաև «Ղարիպի Ազատութեան Ճանապարհին»:

Գինն է 90 սանթիմ վաճառ

Ա Ն Ո Ւ Շ Ս Ա Ն

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

կամ

Ա. Գ. Զ. Կ. Ս. Մ. Ը. Թ. Ծ. Ս. Ա. Կ. Ա. Ս. Ը.

Վէպ մը իրական կեանքէ Մամուլ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան նախնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գիւրու թիւն ընծայուելու համար:

Բաժնեգրին է 1 Ֆրանք. քսթի ծախքը հրատարակչին վրայ է: Տպագրութիւնը աւարտուելու գրքերը կը յանձնուին բաժանորդներուն: Գոյանալիք հասոյթը ամբողջով կը նուիրուի «Հայկական կարմիր խաչի» ընկերութեան: Բաժանորդագրութեան համար գիմն հետեւեալ հասցէին:

Մուրատ Երանոսեան

(Պուլկարիա) Վ. Ա. Ռ. Ն.

ԹԱՏՐՈՆ «ՊՈՐԻՍ»

Հանի Բաւաֆօ

Ա. Ա. Ա. Ն. Ա. Յ. Ե. Զ. Ը. Թ. Ծ. Ս. Ա. Կ. Ա. Ս. Ը.

Վ Ե Ս Ե Լ Օ

Հայ դերասանական խմբին փոքր վաղը հինգ շաբաթի գիշեր պիտի ներկայացուի:

Ի Ն Պ Ա Ս Տ

Տ. Գալիւնեանի և երկու դերասաններու

Ա Յ Ի Տ Ա

անուի օրագրութիւն 5 արարուած համարաւոր հրատարակեալ Բարսեղի

Վերսիի

Թարգմանարի և Տ. Գալիւնեանի եղբոր խմբի կատարած հասարի Հին Եգիպտոս մէջ քուսակաճ 6300 տարի անց տեսարանք զգեստ եգիպտական ոճով նորոգ պատրաստուած:

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԳ

Պ. Գ. Յակոբեանի և Օր. Բողաչիի կողմից խիստ ծիծաղաշարժ դաւեչտ Պ. Ա. Պէնիւանի կողմէ

Պ Ա Լ Է Դ

Օրիորդ Բարսեղի կողմէն Տոմսակները աշտուրեմէ կը ծախուին Պ. Ա. Զարգանէլեանի քով:

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ—Варна